

# ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սույն թվականի հունիսի 10-ին, Ս. Գրիգոր Լուսավորչի Գյուտ Նշխարաց տոնի պատարագի ավարտին, Երևանի Ս. Սարգիս եկեղեցում տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի 1984 թ. շրջանավարտ Հակոբ սրկ. Մարտիրոսյանի քահանայակոչման կարգը՝ խարտավիլիակությամբ Տ. Կարապետ ավագ քհն. Գլճյանի: Նորընծան ի լուր ժողովրդյան խոստացավ «յանձն առնուլ և կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն և հայրապետացն և կալ ըստ կանոնաց նոցա»: Ընծայալը ուխտեց «ամենայն պատրաստութեամբ և առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօն Աստուծոյ»:

Հունիսի 11-ին, կիրակի օրը, Ս. Սարգիս եկեղեցում ս. պատարագ է մատուցում Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերշ. Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը: Ս. պատարագի ընթացքում սրբազան հայրը կատարում է Հակոբ սրկ. Մարտիրոսյանի քահանայական կոչման և ձեռնադրության սրբազան արարողությունը:

Խորհրդավոր է պահը: Նորընծան խարտավիլիակի առաջնորդությամբ, ծնկաչոք ուղղվում է դեպի ատյան, բարձրանում ս. խորան: Այնուհետև բարձրացնելով ձեռքերը՝ հրաժարվում է աշխարհիկ կյանքից:

Ըստ «Ձեռնադրության Մաշտոցի» նորընծային տրվում է քահանայական փիլոն և պատարագի զգեստ: Զգեստավորվելուց հետո ձեռնադրող սրբազանը սրբալույս մեռոնով օծում է նորընծայի ճակատը՝ վերանվանելով նրան Խորեն քահանա: Ապա սրբազանի թույլտվությամբ նորօծ Խորեն քահանան տալիս է ժողովրդին իր առաջին օրհնությունն ու աստվածային խաղաղությունը:

Սրբազան խորհրդի կատարման առթիվ սրբազան հայրը բովանդակալից քարոզ է խոսում՝ բնաբան ունենալով Ս. Պողոս առաքյալի «Մշակ առանց ամօթոյ» խոսքերը: Սրբազան հայրը ներկաներին ծանոթացնում է Խորեն քահանայի կենսագրությանը: Խոսելով հայ հոգևորականի մասին, սրբազան հայրը նշում է այն գործունեությունը, ծառայության այն ասպարեզը, որտեղ սպասարկում են հայ հոգևորականները: «Պետք է այնպես ծառայել,—ասում է սրբազան հայրը,—որ հայ հոգևորականը իր օրինակելի վարքով հայ հավատացյալներին կրթի ու դաստիարակի, սովորեցնի նրանց Ավետարանի ճշմարտությունները, Հայ Եկեղեցու դավանաբանությունն ու ծեսը: Լինի քաջ

հովիվ, որ անմնացորդ նվիրումով հաղթահարի բոլոր դժվարությունները և իր գործունեության համար արժանանա Պողոս առաքյալի գնահատական խոսքին՝ «Մշակ առանց ամօթոյ»: Աղոթում ենք և մաղթում, որ Աստված Տ. Խորենին լցնի Ս. Հոգու շնորհներով, որ միշտ լինի «Քաջ հովիվ» և «Մշակ առանց ամօթոյ»:

Նույն օրը, երեկոյան, կատարվում են «Օրհնություն աբեղայի» և «Օրհնություն վեղարի» կարգերը, և Տ. Խորեն քհն. Մարտիրոսյանին տրվում է վեղար՝ ի նշան կուսակրոն քահանայության:



Մի պահ ձեռնադրությունից